այն խառնվում են վարչական գործերի մէջ, այլ և կապալով վերցնում են զանազան հարկերի և տուրքերի հաւաքելը։

Ինչպէս որ քաղաքակրթված երկիրների մէջ լինում է, նոյնպէս և այստեղ անհրաժեշտ է վարչական և դատաստանական իշխանութիւնները բաժանել միմեանցից։

Բ. Դրան եւրոպացի խորհրդատուները դատաստանական կանոնադրութիւն կազմելու համար առաջարկում են մի յանձնաժողով նշանակել մասնագէտներից, որոնց թւում լինեն և եւրոպացիներ, որոնք սկզբից դատաստանական բարձր հիմնարկութիւնների անդամներ կը լինեն և օրինակ կը տան դատաստանական գործեր վարելու համար։

Հարկերը կանոնաւորելու և Ասիական Թիւրքիայի մէջ հարկերը հաւաքելու ժամանակ սովորական զեղծումների առաջն առնելու համար պահանջվում է մարզեցատը դարձնել կանոնաւոր, այսինքն դրամական հողային տուրք, որի քանակութիւնը պէտք է հողերի չափի և հողի յատկութեան համեմատ լինի։ Մեծ պետութիւնների ներկայացուցիչների կարծիքով, բնակիչներից ստացվող պետական բոլոր տուրքերը երկու կարգի պէտք է բաժանվին. մաքսային տուրքերը և աղի հարկը պէտք է ծառայեն պետական ընդհանուր պէտքերի համար և այնուհետև մնացած եկամուտները պէտք է ծառայեն տեղական վարչական և դատաստանական պէտքերին։ Մնացորդի մի մասը դարձեալ տեղական պէտքերի համար հարկաւոր է գործածել, միւս մասը Կ. Պոլիս ուղարկել։ Հարկերը հաւաքելու և նրանց տեղական պէտքերին ծառայեցնելու համար երևի հարկաւոր կը լինեն տեղական հիմնարկութիւններ։

Ի հարկէ վերանորոգութիւնների այսպիսի հարևանցի նախագծի իրագործելը հազարաւոր արգելքների կը հանդիպի և հազարաւոր հարցեր կը բարձրացնի այս կամ այն միջոցի դարձադրութեան մանրամասնների վերաբերութեամբ, որոնց լուծելը պահանջում է շատ ժամանակ, աշխատանք և գործերի դրութեան հետ ծանօթութիւն։ Որպէս զի մեր հաւատարապէս հասկանանք, թէ ինչպիսի դժուարութիւնների դէմ պէտք է մաքառեն Թիւրք վերանորոգիչները, բաւական է յիշել շարիաթի նշանակութիւնը և սարսափելի արգելքները թէ նրան դատաստանական գործերի մէջ չը խառնելու և թէ նրա ոյժը պահպանելու դատաստանական վերանորոգութիւնների ժամանակ. ի՞նչպիսի միջոցներով ապահովել դատաստանական վճիռների իրագործումը վայրենի քիւրդերի վերաբերութեամբ, ինչպէս նրանց մտցնել նախագծի մէջ, կամ ինչպէս ստեղծել մի պետութեան մէջ վարչական և դատաստանական հիմնարկութիւններ, որոնք արմատականապէս տարբեր են միմեանցից, որոնց իրաւասութիւնը այս կամ այն ազգութեանը վերաբերէր, իսկ այդ ազգութիւնները բնակվում են միասին և ցրված ահագին տարածութեան վրա և անմատչելի տեղերում։ Միմիայն մեծ համբերութեամբ և պահանջների խիստ չափաւորութեամբ կարելի է ամենահամեստ բաղդաւոր հետևանքներ ստանալ քաղաքական այժմեան արշաւանքից, այն էլ եթէ Թիւրքաց կառավարութիւնը ճշմարիտ աջակցի մեծ պետութիւնների ջանքերին Թիւրքիահպատակ հայերի դրութիւնը բարւոքելու համար։

„ПОРЯДОКЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

„Порядокъ“ լրագրի մէջ տպված է հետևեալ թղթակցութիւնը Բերլինից։ Դեռ ևս ամենքին հետաքրքրում է այն հարցը, թէ արդեօք Գամբետտա գնացել է Վարցին, թէ ոչ։ Հասարակութիւնը այդ հարցով չափազանց գրաւված է, թէպէտ լրագիրները մի քանի պատճառներից դրդված աշխատում են, եթէ ոչ լռութեամբ անցնել այդ անցքը, որովհետև այդ անկարելի է հասարակութեան հետաքրքրութեան պատճառով, գոնեա այդ այցելութեանը առանձին նշանակութիւն չը տալ։ Որ այդ անտարբերութիւնը առերես է և պահպանվում է զանազան նպատակների համար, կարելի է ապացուցանել նրանով, որ մամուլը պաշտօնական քննութիւն սկսեց, որպէս զի իմանայ, թէ երևելի ճանապարհորդը որտեղից է անցել, ինչ տեղ է կանգնել, որքան ժամանակ է մնացել և այլն։ Զանազան լրագիրների թղթակիցները այցելեցին երկաթուղիների բոլոր կայարանները, բոլոր հիւրանոցները, ամեն տեղ տեղեկութիւններ հաւաքեցին և այժմ մանրամասնօրէն նկարագրում են պ. Մասսօբի avocat (կեղծ անուն, որով իբր թէ Գամբետտա գնացել է Գերմանիա) ճանապարհորդութիւնը։ Ցայտնված է, որ Գամբետտա եղել է Համբուրգի մէջ և եղել է Hôtel S.-Petersbourg հիւրանոցի մէջ։ Այնտեղից ուղևորվել է Լիւբեկ, այսինքն Վարցինի ուղղութեամբ, վերցնելով տոմսակ մինչև Սլաւա կայարանը, որտեղ և հարկաւոր է կանգնել, եթէ կամենում էք այցելել Վարցին։ Այստեղից Գամբետտա երեք օրով անհետանում է։ Այնուհետև Գամբետտա յայտնվում է Դանցիգի մէջ Hôtel du Nord հիւրանոցում։ Երեք օրից յետոյ Գամբետտային տեսնում են Դրեզդենում Hôtel de Russie հիւրանոցում, ուր նա հասել էր Էյդկունենից։ Դրեզդենից պ. Մասսօբի ուղևորվել է Ֆրանկֆուրտ, ուր նա իջել է Hôtel de Russie հիւրանոցում։ Ահա թէ ինչ են իմացել լրագրական քննիչները։ Լրագրական քննութեան այս հետևանքները աւելի էլ հաստատեցին ընդհանուր համոզմունքը, որ ճշմարիտ կայացել է „Եւրոպայի ամենաերևելի մարդկանց“ տեսութիւնը։ Կիսապաշտօնական լրագիրները լռում են, ոչ հաստատելով և ոչ հերքելով այդ փաստը, իսկ այդ լռութիւնը հասարակութիւնը ընդունում է իբրև համաձայնութեան նշան։

Այժմ տեսնենք, թէ լրագիրները ի՞նչի համար են հարևանցի կերպով խօսում այն հարցի մասին, որ ընդհանուրի հետաքրքրութեան առարկայ է։ Պահպանողական լրագիրները ուրախ կը լինէին գովել „Գերմանիայի համար այդ փառաւոր անցքը, երևելի կանցլերի այդ նոր փայլուն աջողութիւնը“ և այլն, բայց նրանք չեն կարող այդ անել, որովհետև պաշտօնական լրագիրները լռում են։ Մինչև վերջինները նշան չը տան, պահպանողականները չեն կարող խօսել։ Ցանկարծ „երևելի կանցլերը“ կը ցանկանայ պաշտօնապէս ոչինչ չասել տեսութեան մասին։ Այդպիսով կարելի է յիմարացած մնալ։ Եւ ահա պահպանողականները, „Post“ լրագրի օրինակին հետևելով, բաւականանում են նկատողութիւններով Գամբետտայի անձնական արժանաւորութիւնների մասին։ Իսկ ազատամիտ լրագիրները....տարաբաղդաբար նրանց սիրտը ճաքում է։ Իբրև ազգասէր-գերմանացիք, որոնք կայսերական դաղափարի երկրպագուներ են, նրանք շատ ուրախ են, իսկ իբրև ընդդիմադրականներ, նրանք յուսահատված են։

Թոյլ տուէք մի փոքր պատմութիւն անել, որ աւելի լաւ կը պարզի գործը, քան թէ ամենամանրամասն մեկնութիւններ։ Երէկ փողոցում պատահում եմ առաջադիմական գլխաւոր լրագիրներից մէկի խմբագրին, որի հետ ես ծանօթ եմ և որ սարսափելի ազգասէր է։ Նա գնում է տխուր, գլուխը կախ դցած։— „Շատ լաւ թղթակից ունէք, նկատում եմ ես, իսկոյն նրան կարելի է դատաստանական քննիչ դարձնել“։— «Այո, ճարպիկ ոստրդական շուն է»։— „Բայց դուք նրան վատ շնորհակալութիւն էք յայտնում։ Նա հրաշքներ է գործում, իսկ դուք նրա տեղեկութիւնների մասին հաւանացի նկատողութիւն էք անում, մինչև անգամ չէք յայտնում ձեր սեփական կարծիքը՝ արդեօք Գամբետտա այցելեց Բիսմարկին թէ ոչ“։— «Կարծեմ այցելել է, մինչև անգամ հաստատ կարելի է ասել, որ այցելել է»։ Եւ այս խօսքերը նա այնքան տխուր արտասանեց, կարծես մի ցաւալի անցք էր պատմում։— «Ինչ է պատահել ձեզ, հարցնում եմ ես, կարծես մահուան պատժի լինէք դատապարտված, այնպէս էք խօսում»։— „Բայց մի՞թէ դուք չէք հասկանում, թէ ինչպիսի փառք է Բիսմարկի համար, եթէ ճշմարիտ Գամբետտա նրան այցելել է։ Դա այն է, ինչին նա այսքան տարի ձգտում էր և որ Գերմանիան չափազանց ցանկանում է։ Դա խաղաղութեան գրաւական է, մի ապացոյց, որ Ֆրանսիան իւրաքանչիւր քայլափոխում չի վնասի գերմանական շահերին։“— „Շատ լաւ հասկանում եմ և հէնց այդ պատճառով ինձ զարմացնում է ձեր տխրութիւնը։ Դուք իբրև ազգասէր պէտք է ուրախութենից թռչկոտէիք“։ —«Այո, իսկապէս ես ուրախ եմ, շատ ուրախ եմ, միայն թէ ի՞նչի այդ անցքը այժմ պատահեցաւ և ոչ թէ մի ամսից յետոյ։— „Այժմ ես լաւ չեմ հասկանում, մեկնեցէք ձեր խօսքերը“։— «Եթէ կը յայտնվի, որ Գամբետտա ճշմարիտ այցելել է Բիսմարկին, այն ժամանակ վերջինի ազդեցութիւնը աւելի էլ կը մեծանայ և մենք ամենավատ ընտրութիւններ կունենանք։ Խաղաղութեան գրաւականը, որ ստացված է միայն Բիսմարկի ջանքերով հպարտաւոր խոստումներից մեծ ազդեցութիւն կունենայ։ Ամենքը խաղաղութիւն են ցանկանում և ամենքը կը հասկանան, որ նա այժմ ապահոված է։ Իսկոյն կը սկսեն զօրքերի ծախսերը պակասեցնելու, խոսել զինաթափութեան մասին և ամենքը կը սկսեն երկրպագութիւն տալ Բիսմարկին“։

Եւ ճշմարիտ ընտրութիւնները մօտենում են և Գամբետտայի այցելութիւնը կարող է մեծ ազդեցութիւն ունենալ նրանց վրա։ Գուցէ հէնց այդ պատճառով պաշտօնական շրջանները լռում են, չեն հերքում տարածված լուրերը, որպէս զի նրանց ամենքը կարողանան յօգուտ Բիսմարկի մեկնել։ Իսկ ազատամիտները այս անգամ էլ չը կարողացան զսպել իրանց ազգային կասկածութիւնը։ „Nat. Zeit.“ լրագիրը թուելով այն հիւրանոցների անունները, ուր իջևանել է Գամբետտա, նկատում է. «Ֆրանսիայի ապագայ մինիստրը կարծես առանձին հակումն ունի դէպի ռուսական անունները»։ Բայց այդտեղ զարմանալի ոչինչ չը կայ։ Եթէ այդպիսի դատարկ դէպքերից յետոյ եզրակացութիւններ անենք, այն ժամանակ Ֆրանսիական առաջին մինիստրի սէրը դէպի ռուս անունները աւելի բնական է, քան թէ նրա այցելութիւնը Բիսմարկին։ Ի հարկէ այդ այցելութիւնը, եթէ նա ճշմարիտ կայացել է, դեռ ևս խաղաղութեան այնպիսի նշանաւոր գրաւական չէ, ինչպէս մտածում է գերմանական ժողովուրդը։

Վերջապէս աւելորդ չեմ համարում տեղեկութիւն տալ ձեզ այն ազդեցութեան մասին, որ գործեցին տարածված լուրերը ռուսաց կառավարութեան դիտաւորութեան վերաբերութեամբ Օստզէյի նահանգների մէջ զեմստվոներ մտցնելու համար։ Թէ պահպանողականները և թէ ազատամիտները միատեսակ հաւատացին, որ այդ լուրերը անհիմն չեն, բայց այդ երկու բանակներն էլ գործին զանազան տեսակ վերաբերվեցան։ Պահպանողականները հանդիստ են և ժըպտում են, իսկ ազատամիտները ընդհակառակը վախենում են և զայրանում։ Նրանց կարծիքով, Օստզէյեան նահանգների մէջ զեմստվոներ մտցնելով, ձեռնամուխ են լինում գերմանացիների իրաւունքներին և պնդում են, որ նրանց ցեղակիցները այդ նահանգների մէջ հաստատամտութեամբ և անելիկիւղ ընդունեն այդ փոփոխութիւնը։ Մասամբ խոստովանելով, որ Օստզէյեան բարօնները շատ անգամ դէպի չարն են գործադրել իրանց իշխանութիւնը, ազատամիտները պնդում են, որ իշխանութիւնը այնուամենայնիւ նրանց անվիճելի իրաւունքն է և որ դասակարգերի ներկայացուցիչները զեմստվոների մէջ կը թուլացնեն ազնուականութեան, այսինքն գերմանական տարրի առաւելութիւնները։ Այդպէս են դատում ազատամիտները, մինչդեռ նրանց քաղաքական հակառակորդները, պահպանողականները, ինչպէս վերևը նկատեցի, ուշադրութիւն չեն դարձնում այդ լուրերի վրա։ Նրանք չեն հաւատում, որ այդ գործը կատարվի։ „Դիտաւորութիւն կայ, ճշմարիտ է, ասում են նրանք, բայց դիտաւորութեան իրագործելը դեռ հեռու է, իսկ եթէ մի բան կը հիմնվի, որ զեմստվոի անուն կը կրէ, այնուամենայնիւ նա այնպիսի ձև կունենայ, որից գերմանական շահերը չեն կարող վնասվել“։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Գերմանական լրագիրները հաղորդում են, որ այս օրերս վախճանվեցաւ երևելի գերմանացի իրաւաբան, Հայդլբերգի պրոֆէսօր Բլունչլի։ Նա շվեյցարացի էր, բայց Գերմանիայում պրոֆէսորութիւն էր անում։ Ցիւրիխի կանտոնի սահմանադրութիւնը իր գոյութեամբ գլխաւորապէս հանգուցեալին է պարտական։ Բլունչլի յայտնի է գլխաւորապէս իր երևելի աշխատանքներով միջազգային իրաւունքի վրա։

—Լրագիրները հաղորդում են որ Սպանիա և Իտալիա հրաժարվեցան կապել Ռուսաստանի հետ քաղաքական յանցաւորները յանձնելու պայմանագիրը, այն ձևով, որ մշակել է այդ պայմանագիրը ռուսաց դիպլոմատիան։

—Գերմանիայի մէջ ընտրութիւնների առիթով եղած յայտնութիւններից ուշադրութեան արժանի են կաթոլիկ-բաւարական կուսակցութեան տղաբարութիւնը և սոցիալ-դէմոկրատ Լիբկնեխտի արտասանած ճառը Մայնցի մէջ։ Այդ ճառով նա խստութեամբ քննադատում էր իշխան Բիսմարկի տնտեսական դիտաւորութիւնները։ Բաւարական ազդարարութիւնը պաշտպանում է Բաւարիայի անկախութիւնը թագաւորող տան իշխանութեան տակ։ Ազդարարութիւնը պահանջում է. սոցիալիստների դէմ հրատարակված օրէնքների ոչնչացնելը, պատերազմական բիւդժետի փոքրացնելը և բանւորների ընկերութիւնների հիմնելը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ